ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2016թ. N___-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Իսակովի պողոտայի հ. 27/10 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.02.2016թ. հ.08022016-01-0172 վկայական) գույքն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

**«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Իսակովի պողոտայի հ.27/10 հասցեում գտնվող հողամասում կառուցվել է սառցադաշտով մարզաառողջարարական համալիր: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հիմնադրամի կողմից Իսակովի պողոտայի հ.27/10 հասցեում կառուցված 500 հանդիսատեսի համար, սառցադաշտով մարզաառողջարարական համալիրը, սարքերով, ապրանքներով և գույքով նվիրաբերվել է Երևան համայնքին:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.439-Ա որոշմամբ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից Իսակովի պողոտայի հ.27/10 հասցեում կառուցված սառցադաշտով մարզաառողջարարական համալիրը, ինչպես նաև դրանում առկա գույքը ընդունվել է որպես նվիրատվություն: Արդյունքում գույքի նկատմամբ իրականացվել է Երևան համայնքի անվամբ իրավունքի պետական գրանցում և ներկայումս այն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.02.2016թ. հ.08022016-01-0172 վկայական/:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտություն է առաջացել Իսակովի պողոտայի հ.27/10 հասցեում կառուցված սառցադաշտով մարզաառողջարարական համալիրը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասն ամրացնել «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջները տարածվում են նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

Նշված գործընթացն ապահովելու նպատակով ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Իսակովի պողոտայի հ.27/10 գույքն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ